



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ**

« 19 » 12/2017 թվական 2018թ.

№ 2/98-11

**Հ Ր Ա Մ Ա Ն**

**Մ.ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետով և հիմք ընդունելով հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2017 թվականի թիվ 54/2017 եզրակացությունը

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական խորհրդատվության և զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Մարգարիտա Գյուլնազարյանին հայտարարել «ԲԱՆԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին.

- սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



*(Handwritten signature)*

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ